ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «09 » սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 06-09-ը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի գրասենյակում՝ ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում, տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ծածկագրով (հակավիրուսային համակարգչային ծրագրային փաթեթի) գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Դադունց	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Գլխավոր տնօրենի խորհրդական ֆինանսական գծով.
Ե. Սմբատյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ընդհանուր բաժնի պետ.
Գ. Ստեփանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Ընդհ. բաժնի ինֆորմ. համ. Կառավարման ինժեներ.
Լ. Օհանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Հաշվապահական ծառայությունների ավագ հաշվապահ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հինգ անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Դադունցը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած Լանար Սերվիս ՍՊԸ-ի որակավորման չափանիշները բավարարում են հրավերով սահմանված պահանջներին:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. Հաստատել ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) Լանար Սերվիս ՍՊԸ՝ բավարար.

Կողմ՝	5
Դեմ՝	0

2. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/118 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել Լանար Սերվիս ՍՊԸ-ին:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 5
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Դադունց _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ե. Սմբատյան _____

Գ. Ստեփանյան _____

Լ. Օհանյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____